

Երեսուն տարիներէ ի վեր ան կր վարէր յունահայոց թեմին առաջնորդական պաշտօնը ի յայտ բերելով կորովալից ու վարչական կարողութիւններով օժտուն ընթացք մը: Կը մեռնի թէեւ խոր ծերութեան մէջ, եւ սակայն արժանաւոր, հայրենասէր աւանդապահ ու նուիրեալ այս եկեղեցականին թողած բացը երկար ատեն պիտի մնայ զգալի Հայաստանեայց Ս. Եկեղեցիին համար:

Կ'աղօթենք որ Աստուած իրեն հարազատ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ բացերը լեցնէ մեկնողներու փոխարէն պարգեւելով նոր մշակներ, իսկ իր այս հաւատարիմ ու ժողովրդանուէր պաշտօնէին հոգին լուսաւորեալ պայծառացնէ ի շարս Ս. Հայրապետաց եկեղեցւոյ:

### Տ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը խորունկ վիշտով կը գուժէ իր երիցագոյն անդամ Հոգ. Տ. Ներսէս Վրդ. Թորոսեանի մահը, որ տեղի ունեցաւ 30 Ապրիլ 1951, երկուշաբթի երեկոյեան ժամը 5.30-ին:

Հոգեշնորհ հայրը ծնած էր Քղի, 1883-ին, Երուսաղէմ եկած եւ անդամակցած՝ Ս. Յակոբեանց Միաբանական Ս. Ուխտին եւ 1913-ին ձեռնադրուած վարդապետ: Վարած է հետզհետէ հիւրընկալի եւ աւագ թարգմանի (1921-ին) պաշտօնները: 1922-1923 Բեթղեհէմի Տեսչութիւնը: 1924-1933 եղած է Տեսուչ Ռեմլէի Ս. Գէորգ վանքին, եւ 1933-1936՝ Տեսուչ Յոպպէի Ս. Նիկողայոս վանքին: Անկէ յետոյ փոխադրուելով Մայրավանք՝ ստանձնած է դարպասընկալի պաշտօնը եւ ընտրուած է անդամ Ս. Աթոռոյ Տնօրէն ժողովի: Երեք տարիներէ ի վեր կը ծառայէր անկողնոյ, սրտի եւ կողատապի հիւանդութեան հետեւանքով: Վերջին երկու օրերուն ունեցած ուղեղային արիւնխոռոմը, փութացուց իր մահը:

Օժման եւ թաղման կարգը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ եւ ի ներկայութեան բովանդակ Միաբանութեան, եւ նախագահութեամբ Գեր. Տ. Մամբրէ Ս. Արքեպս. Սիրունեանի, որ այս առթիւ խօսեցաւ նաեւ պատշաճ դամբանական մը, վեր հանելով հանգուցեալ հօր արժանիքները ու ձգած բացը Ս. Յակոբեանց Միաբանական Ս. Ուխտէն ներս: Իր մարմինը ամփոփուեցաւ Չամ-թաղի գերեզմանատան մէջ:

Հանգուցեալ հայրսուրբի մահը զգալի բաց մը կը ձգէ մեր Միաբանական Ուխտէն ներս: Մարբակնցաղ, խոհեմ, նախանձախնդիր, ժրաջան եւ Ս. Աթոռին շահերուն հոգեւին նուիրեալ եկեղեցական, իրեն յանձնուած բոլոր պարտականութիւնները ան կատարեց խղճմտանքով եւ Աթոռանուէր պատրաստակամութեամբ:

Կ'աղօթենք որ Տէրը վարձահատոյց լինի իր բազմաշխատ ու արդիւնաւոր պաշտօնէին, ու անոր հոգին հանգչեցնէ իր լոյսի յաւիտենական կայաններուն մէջ:

Հանգիստ իր զուարթ հոգւոյն: